իւրոց, ՌՈՁՌ (1687) սակայն չեղեւ տեւական։ զի Սիմոն եպիսկոպոս ոմն էառ 'ի Դրանէ զիշխանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի, առանց վճարելոյ զսահմանեալ տուրսն, որպէս յայտ առնէ զայս Պատրիարքական Պերաթն։ և եկեալ 'ի բաց վարեաց անտի զՅովհաննէս եւ յինքն կալաւ զաթոռն զամս իբր ԺԲ, և ապա ընկեցաւ յաթոռոյն հնարիւք նախորդին իւրոյ։ Ի սոյն ժամանակի Մելիտոն և Թուխման՝ և Յովհաննէս վարդապետ, առեալ հրաման Ծեփեցին զեկեղեցի Ս. Յակոբայ և 8 սենեակս, և չինեցին զքարեայ սանդուխն Բեթղեհէմի վանայ։

Ի մեռանիլ Սուլթան Մէհէմէտ չորրորդի, եւ 'ի թագաւորել Սուլթան Սիւլէյման երրորդի, եղեւ հրաման նորոգութեան հին հրովարտակաց, ըստ սովորութեան թագաւորացն Օսմանցւոց։ Յայնժամ հարկ եղեւ Յովհաննէս Պատրիարքի նորոգել զհրովարտակ իւր, որոյ վասն դնացեալ 'ի Կոստանդինուպոլիս, եւ նորոգել զայն, վճարելով զսահմանեալ տուրսն, եւ եկեալ յԵրուսաղէմ սկսաւ վարել զիշխանութիւն Պատրիարքութեան, ՌՈՂԳ (1691)։

Մինչչեւ ձեռնարկեալ մեր 'ի գործ Յովհաննէս վարդապետի, տեսցուք համառօտիւ զվէճս Յունաց ընդ Լատինաց, որ եղեւ 'ի սմին ժամանակի։

Յոյն Պատրիարքն Երուսաղէմի առաքեաց զփոխանորդս և զթարգմանս իւր առ դատաւորն եւ ամբաստան եղեւ զՌափայէլ փոխանորդէն, զԱնտոն և զՄանսուր թարգմանաց նոցին, և ասեն, եկեղեցին Բեթղեհէմի՝ սիւնազարդ դաւիթն, և փականք դրանցն՝ են 'ի ձեռս Յունաց, և չէ օրէն ումեք 'ի քրիստոնէից առանց հրամանի Պատրիարքին Յունաց մտանել անդ սակս ուխտի, որպէս յայտ առնէ զայս կայսերական հրովարտակն։ Իսկ յայսմ ամի միաբանք Լատինաց 'ի դալստեան նոր տեսչի իւրեանց, և 'ի գնալ նորին 'ի Բեթղեհէմ ընդ առաջ ելին նմա մոմեղինօք եւ զգեստուք, և արկին գորգ 'ի սիւնազարդ դաւթի անդ։ և յետ աղօթս մատուցանելոյ, էջ յԱյրն Ծննդեան Քրիստոսի, եւ անտի դարձաւ 'ի վանս իւր։ Սակայն այսոքիկ արտաքոյ են սովորութեան, և չունին Լատինք իրաւունս առնել այնպէս, զի բովանդակ եկեղեցին սեփհական է ազգին Յունաց։ Եհարց դատաւորն զփոխանորդն Լատինաց